Հաշվետվություն

2025 թվականի հուլիսի 14-ից 17-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**

   Վահրամ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ), Գլխավոր տնօրեն:

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա, «Ռոսատոմ» պետական կորպորացիա), 2025թ. հուլիսի 14-ից 17-ը:

4. **Հրավիրող կողմը**

   Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման ԱՊՀ անդամ պետությունների հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցել «Բազմաֆունկցիոնալ արագ նեյտրոններով հետազոտական ռեակտորի» (МЦИ МБИР) կիրառման ծրագրի (այսուհետ Ծրագիր) մշակման աշխատանքներին:

6. **Քննարկված թեմաները**

   2029-ից 2040 թթ. համար ԱՊՀ պետությունների գիտական կազմակերպությունների համատեղ հետազոտական ծրագրի մշակում «Բազմաֆունկցիոնալ արագ նեյտրոններով հետազոտական ռեակտորի» (МБИР) կիրառմամբ (Ծրագրի նախագիծը ռուսերեն լեզվով կցվում է):

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Քննարկմանը մասնակցում էին Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ուզբեկիստանի, Ռուսաստանի ատոմային էներգիայի ոլորտի գիտական կազմակերպությունների ներկայացուցիչները:

   Ծրագիրը ներկայացրեց ռուսական կողմից “Лидер консорциума “МЦИ МБИР” կազմակերպության գլխավոր տնօրեն պարոն Վասիլի Կոնստանտինովը: Ելույթ

ունեցան և քննարկումներին մասնակցեցին բոլոր երկրների կազմակերպությունների ներկայացուցիչները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում որոշվեց վերամշակված Ծրագիրը ստորագրելուց հետո այն ներկայացնել բոլոր կողմերին՝ իրենց երկրներում վերջնական քննարկում անցկացնելու համար:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Եղան առաջարկություններ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում յուրաքանչյուր երկիր ներկայացնի առաջարկ համատեղ հետազոտման մասնակից դառնալու վերաբերյալ:

Խիստ կարևորում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը մասնակցի նշված Կոնսորցիումի Ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքներին, որը հնարավորություն կտա ապագայում տիրապետելու գիտական հետազոտությունների արդյունքներին:

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

22.07.2025թ.